

# Ինքնախաբեությունից անդին կամ ինչպես մտնել մեր «Եվրաճանապարհը»

## Համառոտագիր



Մարդկային  
գարգացման  
միջազգային  
կենտրոն

### Ի՞նչ է Եվրոպան, մենք դրա մա՞ս ենք, թե՞ չէ

Աշխարհագրորեն՝ թերևս ոչ, որովհետև Հյուսիսային Կովկասի լեռնաշղթան բաժանում է Եվրոպան Ասիայից: Զաղաքականապես՝ մասամբ, որովհետև մաս ենք կազմում «Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ» ԵԱՀԿ-ին (ուշադրություն դարձրեք, երկուսից ոչ մեկը Եվրոպայում չէ), ինչպես նաև Եվրոպայի խորհրդին: Կա մեկ էլ ՆԱՏՕ-ն՝ այսպես կոչված եվրո-ատլանտյան ինտեգրացումը, որտեղ «գործընկեր ենք հանուն խաղաղության»: Եվրախորհրդին մեր անդամակցությունն արդեն տարիների պատմություն ունի, ունենք համագործակցություն և գործընկերություն Եվրոպական Միության հետ, և նրա կողմից էլ ճանաչվել ենք որպես «նոր հարևան»: Վերջինս, որն ի տարբերություն ԵԱՀԿ-ի, դուրս է պահում ԱՄՆ-ն ու ՌԴ-ն իր կազմից, կարելի է անվանել «Բրեստից (Ֆրանսիա) մինչև Բրեստ (Բելառուս)» Եվրոպա: Եվ երբ խոսում են «Եվրա-չափանիշների» մասին՝ ի նկատի ունեն հենց այս հատվածի չափանիշները:

Անչափ կարևոր է այս ամենը հասկանալ, որպեսզի բառերի խաղի հետևում չկորի իմաստը:

*Սպասում են մեզ Եվրոպական Միությունում:* Եկեք անկեղծ լինենք, ո՛չ, չեն սպասում: Նույնիսկ Լեհաստանին կամ Ռումինիային (էլ մնացած ԵՄ նոր անդամների մասին չասած), որոնք հույսեր ունեին, որ ինչպես Իսպանիային, Պորտուգալիային և Հունաստանին, իրենց էլ դոտա-ցիաներ ու այլ օգնություն կտան, որ արագորեն դառնան նպատակադրված չափանիշների երկիրը, նույնիսկ Թուրքիային, որ կարևորագույն աշխարհառազմավարական դիրք ունի ու վաղուց հերթի մեջ է՝ ասում են «դեռ կտեսնենք»...

Էլ ու՞ր մնաց փոքրիկ Հայաստանը, երբ Եվրոպական միությունը չգիտի, թե ի՞նչ անի իր նոր անդամների հետ: Որքա՞ն կարելի է խոսել Եվրոպական արժեքների մասին ու որևէ բան չանել (խոսքը բնավ միայն Հայաստանի մասին չէ, այլ նախկին կոմունիստական երկրների): Մյուս կողմից, պարզ է, չէ՞, որ փոփոխություններն ու բարեփոխումները հեշտ չեն տրվում: Տաքուկ սստած դատողություններ անելն էլ դժվար գործ չէ:

Իսկ իրականությունն այն է, որ մենք շախմատային այդ խաղատախտակից այս պահին դուրս ենք: Անընդհատ ինքներս մեզ համոզելը, թե Եվրոպայի ուշադրության կիզակետում մենք ենք ու մենք, երբ կողքներս կա Իրան, Թուրքիա, Ռուսաստան, Միջին Ասիա, Իրաք ու Աֆղանստան, առնվազն վնասարար է:

Եկեք սթափ գնահատենք, թե որտեղ ենք մենք ապրում և ինչ կարող ենք անել ու ակնկալել մեր տեղում: Տե՞ղը փոխել՝ չենք կարող: Մինչդեռ Հայաստանին անհրաժեշտ է ներմուծել խաղի Եվրոպական կանոններ, որոնք, մեր դեպքում, նախ և առաջ սահմանադրական ու իրավական կանոններն են: Սա է իրական հարցը:

### Բարեփոխումների, Էլիտաների և Ժամանակի մասին

Ժողովրդավարությունը, չնայած Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում արձանագրած իր փառահեղ պատմությանը, հարաբերականորեն նոր երևույթ է: Այս միտքը կարող է պարադոքսալ թվալ, բայց բացատրությունը ևս նույն տեղում է:

Չնայած այդ փառահեղ պատմությանը՝ 18-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբ ժողովրդավարությունները եղել են խիստ սահմանափակ: Զվեի իրավունքից իրավականորեն և փաստացիորեն օգտվել են միայն հարուստները՝ դուրս թողնելով ոչ միայն աղքատներին,

Երևան 0001  
Սայաթ Նովա 19  
Հեռ.՝ +374 10 582638  
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org  
www.ichd.org



ճորտերին կամ ճորտացվածներին, այլև կանանց և ազգային կամ ռասայական փոքրամասնություններին: Լուսանցքում մնացողների խնդիրները մինչև հիմա վերջնական լուծում չեն գտել: Ժամանակակից ժողովրդավարությունները փաստորեն ձևավորվել են միայն Երկրորդ Աշխարհամարտից հետո, երբ այդ բոլոր երկրներում ձևավորվեց ազգային համաձայնություն/կոնսենսուս ընդդեմ կոմունիզմի/կոմունիստների և ֆաշիզմի/ֆաշիստների: (Չավեշտ Է, բայց ընդդեմ միավորվելը միշտ կարծես ավելի հեշտ է ստացվում, քան հանուն որևէ նպատակի:) Այդ օրակարգը շարունակում է այսօր ևս գործել:

Այս օրակարգի կրողներն են այդ երկրների Էլիտաները, որոնք տեսան, թե ինչ արդյունքների կարող են հանգեցնել ֆաշիստական կամ կոմունիստական ուղիները: Այդ Էլիտաները ներդրեցին իրենց ամբողջ ջանքն ու եռանդն իրենց ժողովուրդներին այդ երկու մոլուցքներից հեռու պահելու համար, ինչպես նաև՝ իրենց բարեկեցությունը, սեփական անվտանգության ու ունեցվածքի ապահովությունը երաշխավորելու համար:

Հարց է ծագում՝ ի՞նչու արևմտյան Էլիտաներին հաջողվեց ձևավորել ազգային համաձայնության մթնոլորտ, որն այսօր չի հաջողվում մի շարք երկրներում: Այս հարցի պատասխանը թերևս ամենակարևորն է և հնչում է շատ պարզ. ԱՆԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ:

Մեկնաբանությունը նույնպես պատմությունից է: Այդ նույն արևմտյան Էլիտաները չէին կարող բառերով ու լոզունգներով վստահություն ներշնչել ու կերակրել իրենց ժողովուրդներին: Անհրաժեշտ էր անկախ մի դատավորի ու միջնորդի ինստիտուտ: Անհրաժեշտ էր հենց այդ Էլիտաներին, որպեսզի իրենց բնակչությունը լցվի վստահությամբ իրենց նկատմամբ: Չսպանի, չթալանի, այլ գա իրենց գործարանում կամ ձեռնարկությունում աշխատի՝ իմանալով, որ արդարություն կա աշխարհում: Եթե նրա իրավունքը ոտնահարեն, ապա կկարողանա արդարությունը վերականգնել այդ դատարանի միջոցով:

Արդյո՞ք Էլիտաների դարդն էր ժողովրդի մեջ արդարության զգացում սերմանելը: Ո՛չ, բնավ: Իրենց դարդը իրենց սեփականության ու կյանքի անվտանգությունն էր, որպեսզի հենց իրենք կարողանային իրենց սեփականության իրավունքը պաշտպանել ու պահպանել այդ նույն դատարանի միջոցով: Կայացնելով դատական իշխանությունը՝ Էլիտաները սահմանափակեցին նաև իրենց անսահմանափակ իշխանությունը և արտոնությունները: Զանի որ, եթե չանեին, ավելի շատ կորցնելու բան կունենային՝ եթե ոչ իրենց կյանքը, ապա առնվազն սեփական բարեկեցությունը: Այլ ելք չկար:

## Եզրակացություն

Հայաստանում ձևավորվում է կայուն քաղաքական համակարգ ու կայուն Էլիտա: Եթե Էլիտայի վերններում մարդկանց նյարդերը տեղի չտան ու դրանից դրդված նրանք դիմեն արտառոց քայլերի, ապա 2009-2012թթ. կարող են դառնալ սահմանադրական կայունացման տարիներ մեր երկրում: Այդ Էլիտային անվերջ կարելի է փնտվել, բայց ավելի լավը չունենք: Նույնիսկ եթե սրբենք, փորձենք նորը ձևավորել՝ Էլի որևէ լավ բան, բացի հետընթացից, այդ «սրբելու ու նորը ձևավորելու» գործընթացից դժվար է սպասել:

Ի՞նչ կարելի է անել այդ դեպքում: Դրդել այդ Էլիտային ջանքեր ներդնելու հանուն դատական իշխանության անկախության և գերակայության ամրապնդման, հանուն հենց իր անվտանգության ու բարեկեցության, քանի որ հակառակ դեպքում զարգացումներն անխուսափելիորեն վատը կլինեն:

*Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ և Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի կողմից համատեղ կազմակերպված «Եվրոպական միությունը 50 տարեկան է. Ինտեգրման գործընթացը ԵՂԹ տարածաշրջանում. ՏԱՄԻՍ-ից դեպի Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՂԳԳ)» համաժողովի քննարկումների ընթացքում: Մտքերն ու եղրահանգումները զուտ հեղինակային են և պարտադիր չէ, որ համընկնեն կազմակերպիչների, համաժողովի մասնակիցների կամ պժանդակողների կարծիքին:*

*Համաժողովը կազմակերպվել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Հայաստանում DFID գրասենյակի աջակցությամբ:*